ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Իրավաբանական բաժնի կողմից 2026թ. 1-ին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ

2026 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում իրավաբանական բաժինն իր աշխատանքներն իրականացրել է լրիվ ծավալով, ուշացած գրություններ և հանձնարարականներ չեն եղել: Ստացվել է 318 մտից գրություն, ի պատասխան ելք է եղել 306-ը, բաժնի կողմից գրվել է ելից 32 գրություն: Ներքին գրությունների քանակը 2678-ն է:

❖ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժինը հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ապահովել է ՀՀ օրենսդրությամբ Մարզպետին և Գլխավոր քարտուղարին վերապահված լիազորությունների օրինականությունը, ուսումնասիրվել է մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմված՝ Մարզպետի և Գլխավոր քարտուղարի ընդունած իրավական ակտերի՝ որոշումների և հրամանների նախագծերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

Բաժնի կողմից ուսումնասիրվել է մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի օրինականությունը, ուսումնասիրվել է մարզի համայնքների ավագանիների կողմից ընդունված 331, համայնքի ղեկավարների կողմից ընդունված 1125 որոշում և ՀՀ գործող օրենսդրության պահանջներին անհամապատասխանության դեպքում Մարզպետի համապատասխան գրություններ են ուղարկվել համայնքների ղեկավարներին:

❖ Ուսումնասիրվել են քաղաքացիների դիմումները, բողոքները և առաջարկությունները, ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ և ներկայացվել են խնդիրների լուծման վերաբերյալ առաջարկություններ, տրվել է իրավաբանական խորհրդատվություն: Հաշվետու ժամանակահատվածում պատասխանվել է մարզի տարբեր համայնքների 11 քաղաքացու դիմումի, որոնցում բարձրացված հարցերը հիմնականում վերաբերել են անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման հետ կապված, սեփականության իրավունքի, համայնքի ղեկավարի կողմից նշանակված վարչական տույժի և այլ խնդիրների: Դիմումներին պատասխանվել է՝ ՀՀ օրենսդրության պահանջներից ելնելով և տրվել է հարցերը լուծող սպառիչ պատասխան:

❖ Պատրաստվել են Բաժնի գործունեությանն առնչվող գրություններ, զեկուցագրեր, հաշվետվություններ, տեղեկատվություն, եզրակացություններ և ներկայացվել համապատասխան մարմիններին:

❖ Ուսումնասիրվել են մակագրված իրավական ակտերի նախագծերը, որոշ դեպքերում ներկայացվել են առաջարկություններ՝ դրանցում ներառելու համար:

❖ Ամենամսյա հաշվետվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ մարզի համայնքների ավագանիների կողմից ընդունված որոշումների վերաբերյալ:

❖ Թիվ ՎԴ/11661/05/24 քաղաքացիական գործով իրականացվել է մարզպետի աշխատակազմի շահերի պաշտպանությունը:

❖ Պատասխանվել են տարբեր պետական մարմինների, փաստաբանների, լրագրողների հասարակական և այլ կազմակերպությունների կողմից ուղարկված գրություններին, հարցումներին:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ն. ՄԱՂԱՔՅԱՆ